ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿՈՎ ԱՎԱԳՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ Է ՇՆՈՐՀՎՈՒՄ Տ. ՊՈՂՈՍ ՔԱՀԱՆԱ ՊԱՐՈՆՅԱՆԻՆ

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՎԱԳՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵՑ Տ. ՊՈՂՈՍ ՔԱՀԱՆԱ ՊԱՐՈՆՅԱՆԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդառաջելով Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանի խնդրանքին, հոկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ավագ քահանայության պատիվ շնորհեց Բրազիլիայի հայոց թեմի հոգևոր սպասավոր, Օզասկոյի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Պողոս քահանա Պարոնյանին՝ ի գնահատություն երկարամյա և արդյունաշատ ծառայության:

Տեր Հոր նախանձախնդիր ծառայության ականատեսն է եղել նաև Ամենայն Հայոց Հայրապետը՝ այս տարի Բրազիլիա կատարած հովվապետական այցի ընթացքում:

Հայրապետական Սրբատառ Կոնդակի ընթերցումից հետո Վեհափառ Հայրապետը համոզմունք հայտնեց, որ 20-ամյա քաջ ու բարի հովվի իր փորձառությամբ Տեր Հայրը կշարունակի ծառայել ի շահ բրազիլահայոց գաղութի բարօրության:

«Դուք պետք է լինեք ոգին Օզասկոյի հայոց գաղութի, և Ձեր ոգուց պիտի կայծ առնի հայաշունչ կյանքը: Առաջնորդեցեք հայորդիներին առավել նախանձախնդրությամբ և ծառայասիրության ու հայրենասիրության Ձեր անձնական օրինակով»,- նշեց Նորին Սրբությունը:

«Մեր աչքերը միշտ դարձած են դեպի Սուրբ Էջմիածին և մեր հույսը Հայաստանն է և մեր Մայր Եկեղեցին Ձերդ Սրբության գլխավորությամբ»,- ասաց Պողոս ավագ քահանան՝ շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին բարձր պատվի համար և վստահեցնելով, որ կանի հնարավոր առավելագույնս հայապահպանության և Հայ Եկեղեցու հեղինակության առավել բարձրացման համար:

Ավագության պատվի շնորհման արարողությանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, Մայր Աթոռի միաբաններ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*